ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 822-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2022.08.08-2022.08.21 Պաշտոնական հրապարակման օրը 17.08.2022	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Պետական եկամուտների կոմիտեի նախագահ	*Ընդունման ամսաթիվը*	09.08.2022
Ստորագրող մարմինը	Պետական եկամուտների կոմիտեի նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	09.08.2022
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.10.2022	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

[+] Կապեր այլ փաստաթղթերի հետ
[+] Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ԹԻՎ 337-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

9 օգոստոսի 2022 թ. N 822-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ԹԻՎ 337-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2020 թվականի ապրիլի 17-ի «Հիմնադրամների գործունեության մասին հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 24-ի թիվ 58-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 337Ն հրամանում (այսուհետև՝ Հրաման) և Հրամանով հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Հրամանի վերնագրից, 1-ին կետից և Հավելվածի N 1-ի «Հիմնադրամների գործունեության մասին հաշվետվության» անվանումից, 1-ին և 20-րդ կետերից հանել «օրինակելի» բառը,

2) Հավելվածի N 1-ի «Հիմնադրամների գործունեության մասին հաշվետվության ձևում» (այսուհետև՝ Ձև) «Աուդիտորական եզրակացություն» բառերը փոխարինել «Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝» բառերով,

3) Հավելվածի N 1-ի Ձևում «Թերթ» բառը փոխարինել «Էջերի քանակը» բառերով,

4) Հավելվածի N 1-ի 4-րդ կետում «կայքը» բառից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերը,

5) Հավելվածի N 1-ի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6.Հաշվետվության 5-րդ կետում լրացվում է հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց (բացառությամբ քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում աշխատանք կատարողների) ընդհանուր քանակը:»,

6) Հավելվածի N 1-ի 9-րդ կետում «հանրագումարը» բառից հետո լրացնել «,բացառությամբ հիմնադրամի հիմնադրի կողմից կատարված ներդրումների» բառերը,

7) Հավելվածի N 1-ի 19-րդ կետում «հաշվետվությունը» բառից հետո լրացնել «ներբեռնելուց, ստորագրելուց և վերբեռնելուց հետո» բառերը,

8) Հավելվածի N 1-ի 21-րդ կետում «լրացվում է» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված եկամուտների և ծախսերի հաշվառման դրամարկղային մեթոդի կիրառմամբ, հայերեն,» բառերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից:

Ռ. Բաղասյան

Պաշտոնական հրապարակման օրը՝ 17 օգոստոսի 2022 թվական: